

կանայք, կ'ըսէ, «այժմ եւս զերիս յիս-
ներեակսն... անսխալ պահեն»։ Հակառակ
այլոց՝ կը պահանջէր երկու օրերու ծոմն
ալ մինչեւ «յիններորդ ժամն»։ Եւ նկա-
տելով որ եօթ եօթնեակ անընդհատ պա-
հելով, աղուհացքը քառասուն եւ ութ օր
կը լինէր, եւ ընդդիմադրաց ձայնը կը զօ-
րացնէր, ապաւինեցաւ Արշարունւոյն մտաց
մէկ խաղին (Արշ. ԺԳ), «ի միում յիսնե-
րեկի» տեսնելով «երկուց քառասնորդաց»
խորհուրդ, որոց մին կը սկսի առաջին
երկուշաբթիէն եւ կը տեւէ մինչեւ Ղա-
զարու յարութիւնը. եւ միւսը սկսելով
երկրորդ երկուշաբթիէն՝ կը տեւէ մինչեւ
Զատիկ. բաժանում՝ որ սակայն դրական
հիմ չունի։

Այդ անձուկ պահանջկոտութիւնը մեծ
արդիւնք մը չպիտի տար. այնպէս որ ԺԱ
դարուն սուտն Դամասկացի դեռ կը տես-
նէր՝ թէ ինչպէս Հայք մեծ պահոց շա-
բաթն ու կիրակէն կը լուծէին, ուտելով
կթեղէն՝ « ոմանք յայտնի եւ ոմանք ի
թաքստի» (Լոյս, 1905, էջ 1113)։ Յա-
ջորդ դարուն Ալաւկայ որդին կը փորձէ
հաստատել նոյն օրերու պնդութիւնը, թու-
լացնողները ծանր ապաշխարութեան են-
թարկելով (ԿԷ)։ Նոյն հրամանը կը կրկնէ
դար մը վերջ ՅՀ. Տաւուշեցին, որոյ օրով